

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/3

26 մայիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Վուրդյա Բուդդարյանի 30.04.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 20.04.2015 թ-ի թիվ 588 որոշման դեմ:

Վուրդյա Բուդդարյանի բողոքում բերված փաստարկները.

26.04.1995թ. որպես անհատ ձեռնարկատեր Վուրդյա Բուդդարյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հաշվառվել է Իջևանի ՏՀՏ-ում և իրականացրել է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն՝ կրպակի միջոցով զբաղվել է մանրածախ ապրանքների վաճառքով:

2000թ. ապրիլի 1-ին գրավոր դիմել է ՏՀՏ և դադարեցրել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, իսկ 28.04.2015թ. լուծարել է պետական գրանցման վկայականը:

20.04.2015թ. Իջևանի ՏՀՏ պետի կողմից կայացվել է հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու վերաբերյալ թիվ 588 որոշումը, համաձայն որի բողոքաբերից ենթակա է գանձման 114.073 դրամ: Պարտքը վերաբերվում է հաստատագրված և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարներին:

Հաստատագրված վճարների պարտքը կազմում է 13.485 դրամ, որի կապակցությամբ բողոքաբերը առարկություն չունի:

Պարտքի մնացած մասը՝ 100.588 դրամը, կապված է պարտադիր սոցիալական ապահովության վճարների հետ, որը վերը նշված որոշման համաձայն առաջացել է 2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբերն ընկած ժամանակամիջոցում, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելուց ավելի քան 11 տարի անց:

Բողոքաբերը գտնում է, որ այդ մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոսվածի 1-ին մասի ա/ կետի պահանջներին համապատասխան, վերը նշված վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչվելու, քանի որ այն կայացվել է օրենքի սխալ կիրառման և սխալ մեկնաբանության հետևանքով, հետևյալ պատճառաբանությամբ:

Հավանաբար, նկատի ունենալով, որ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը չի հանձնվել հարկային մարմնին, ՏՀՏ-ն հետագայում հաշվարկել է պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարներ և ժամկետանց օրերի տույժեր:

Բողոքաբերը գտնում է, որ 2011թ. դեկտեմբերից մինչև 2012թ. դեկտեմբերը ընկած ժամանակահատվածի համար այլևս չպետք է հաշվարկվեին պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարներ:

«Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Պետական գրանցման վկայականը

Ժամանակավոր լիազոր մարմինն հանձնած և այդ ժամանակաշրջանում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը սույն մասով սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չեն կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար»:

Վկայականը հանձնելու և գործունեություն չիրականացնելու պայմանով նվազագույն սոցիալական վճարներից ազատելու դրույթը «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետում մտցվել է 2006թ. սկսած, որի մասին բողոքաբերը տեղեկացված չի եղել, քանի որ 2000թ. ապրիլի 1-ին ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելուց հետո այլևս ոչ մի առնչություն չի ունեցել հարկային մարմինների հետ, իսկ ՏՀՏ կողմից էլ այդ կապակցությամբ չի ծանուցվել, թեև հարկային մարմինների վրա այդպիսի պարտականություն է դրված եղել:

Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված էր. «Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006թ. հունվարի 1-ից հետո, մինչև պետական գրանցամատյանում դադարեցման /լուծարման/ գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում /չեն վճարում/: Սույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցուցակները /2003-2005 թվականների համար հաշվարկված և վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով/ հարկային մարմինները մինչև 2006թ. սեպտեմբերի 1-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալություն համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006թ. սեպտեմբերի 1-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման /լուծարման/ մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար»:

Բողոքաբերը գտնում է, որ ՏՀՏ անգործության հետևանքով իր վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, քանի որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» 11.11.2005թ. ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով արտոնություն էր սահմանված մինչև 2006թ. մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու /լուծարվելու/ վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած և պետական գրանցման վկայականը հանձնած անհատ ձեռնարկատերերի համար:

Օրենքի վերոհիշյալ դրույթներից հետևում է, որ արտոնությունները տարածվել են նաև այն անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, ովքեր մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ը դադարեցրած են եղել գործունեություն իրականացնելը և փաստացի ձեռնարկատիրական գործունեություն չեն իրականացրել:

Բողոքաբերը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը դադարեցրել է 2000թ. ապրիլի 1-ին, հետևաբար պետական գրանցամատյանում դադարեցման /լուծարման/ գրառում կատարելու համար իր անունը ևս պետք է մտցվեր ցուցակների մեջ և ներկայացվեր պետական ռեգիստրի գործակալություն կամ՝ պետք է ՏՀՏ կողմից ծանուցվեր, որ անհրաժեշտ է վերադարձնել պետական գրանցման վկայականը: Ահա դրա հետևանքով է, որ ձևական առումով բողոքաբերը մնացել է անհատ ձեռնարկատեր:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 8-րդ, 63-րդ, 70-րդ, 72-րդ հոդվածների պահանջներով բողոքաբերը խնդրում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտքի մասով անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 20.04.2015թ. թիվ 588 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Վոլոդյա Բուղդարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 10.12.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 114.073 դրամ, որից ապառք 73.886 դրամ, տույժ 40.187 դրամ: Պարտքը առաջացել է հաստատագրված վճարների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Հաստատագրված վճարների պարտքը կազմում է 13.485 դրամ, որն առաջացել է 01.02.2001 թ-ին Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հարկատուի ներկայացրած հայտարարությունների հիման վրա:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտքը կազմում է 100.588 դրամ (որից ապառք 65.000 դրամ, տույժեր 35.588 դրամ) և առաջացել է 2011 թ-ի դեկտեմբերից մինչև 2012 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում նվազագույն վճարների հաշվարկման հետևանքով: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 20.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 588 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Վոլոդյա Բուղդարյանից 114.073 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված պնդումներին, որ հարկային մարմինը պարտավոր էր Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանին տեղեկացնել պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնելու մասին, ապա նշվեց, որ հարկային մարմինը նման պարտականություն չի ունեցել:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանի նկատմամբ չեն կիրառվել 11.11.2005 թ-ին ընդունված «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, հարկ է նշել հետևյալը:

11.11.2005 թ-ին ընդունված «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա»:

Քննարկվող դեպքում վերոգրյալ օրենքի գործողության ընթացքում Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանը հաստատագրված վճարի գծով ունեցել է 13.485 դրամ չկատարված պարտավորության գումար, որն առաջացել է 2001 թ-ի ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ ներկայացրած հայտարարությունների հիման վրա: Ընդ որում, Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանի կողմից չի վիճարկվում նշված պարտավորությունների առկայության փաստը: Հետևապես, «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր, սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները Ա/Ձ Վոլոդյա Բուդդարյանի նկատմամբ չէին կարող կիրառվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումը հիմնավոր է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 20.04.2015 թ-ի թիվ 588 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

